



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

A

987,936




1922

ԶԵՑԹՈՒՆՑԻՔ

ԵԿ

ԼՈՒՍԱԻՌՉԱԿԱՆ

ՀԱՅՔ



Կ. ՊՈՂԻՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1867

ԶԵՑԹՈՒՆՑԻՔ

ԵՒ

ԼՈՒՍԱԿՈՐՉԱԿԱՆ

ՀԱՅՔ



ԶԵՂԹՈւնցի Դիւթական և անուշ ձայն մըն էր այս ,
հայոց ընդհանրութեան ականցին , յորմէ թլուատ հայն անզամ ,
իբր ելեքտրական գօրութենէ մ'սթափած , կը հարկադրուէր
մաքառիլ իր բնական ախտին դէմ և արտասանել վերջապէս
այն անունը , զոր կոյր զկուրայն և յանզգոյշ սիրելու բնա-
կան պարտաւորութիւն մը կզգար : Այս ուժգին՝ բայց վաղան-
ցիկ սէրն՝ ըստ ինքեան ուրիշ բան չէր՝ բայց եթէ անարդիւն
ակնկալութեանց արզասիք :

Նոյն իսկ ձայնն է դարձեալ , որ այս օրերս կը հնչէ հայ-
ուն ականցին . բայց չէ թէ առաջնոյն անուշութեամբն , այլ
իբրև ձայն անախորժ , որ ոչ միայն հակառակ ազդեցու-
թիւն կը պատճառէ հայուն , այլև չայաստանեայց աղէտալի
դէպքերուն վրայ յաւելուածոյ մը նշմարանք ևս կռահել կու-
տայ անոր : Եւ արդարեւ , զզայուն հայը չը կրնար ուրիշ նը-
շանակութիւն մի տալ այսպիսի անակնկալ դէպքին .

Զեմք կրնար ըսել թէ կրօնիւ տարբեր հայերն այս ազդեցութենէ զերծ մնացին, հչ . Ամէն հայ (1), թէ և տարբեր զգացմամբ, կրօնական շանթաձիգ որթուման ձայնէ մը յանկարծ սթափելով՝ աչքերնին բացին թէ չէ, տեսան այն դիւթական անունը կրող զէյթունցի իշխանքը, որ Վատիկանի երերուն գահին առջև ի ծունր խոնարհած՝ բարոյական ստըրկութեան առաջին պաշտօնը կը մատուցանէին :

Ներքին համոզման ծնունդը չէր այս. բայց զէյթունցոց խելքով՝ իրենց անձնական ազատութեան առաջին քայլն էր . և զուցէ Զէյթունի ժողովրդեան վրայ ի պաշտօնէ բռնանալու սկզբնաւորութեան հանդէսը կը համարուէր :

Սոյն միջոցին հայոց լուսաւորչական մասին վերաբերեալ խնդրոց ամենէն մեծն ու կարևորագոյնը , այսինքն Մայր Աթոռոյ Հայրապետական ընտրութիւնը , կատարելապէս լըմընցած էր, և Կ.Պօլառ ժողովուրդն իր նորընտիր Հայրապետին գալստեանը միայն կըսպասէր : Ուստի և կրնամք ըսել որ ընդհանրութեան աչքին երևցած խնդիրներուն ամենէն զուարթադէմն ալ այն էր . որուն վերաբերութիւն ունեցող խառնանիւթ և անզտելի մնացորդն ալ Ծշի Արգոյ հեղինակին ու նորա Թիֆլիսցի Հ. Հ. ճշմարիք մարդ անուն Թղթակցին ձգուած կը համարուէր , որ կրցածնուն չափ խնդիրն այլայլին , և Հայոց գրականութեան նախատինք բերելու չափ՝ մտքի ազատութիւնը մրօտեն , պատույ դպչին , մարդ զրպարտեն ու մինչև դատաստանին օրը խօսին ու խօսին :

Սակայն անդին ուրիշ և բազմաթիւ խնդիրներ դիզուած էին Պատրիարքարանի զլսին , և կարծես թէ անտեսանելի՝

(1) Մեծուացը Հավատիսր չկարդացող կամ նորա խօսած Ֆշմարտութեանցն ուշ դնել չուզողներուն համար է մեր խօսքը :

բայց գորաւոր ձեռք մը՝ տարիներէն ի վեր զանոնք բռնած՝ ասդիս անդին և լստ հաճոյից տատանելով՝ միշտ շիռթ՝ բայց և այնպէս նոյնադիր և անլուծանելի կացութեան մէջ պահել կուգէր զանոնք, և հետևաբար խնդիրներն այս վիճակին մէջ պահելու հնարքներն աւելի զօրութիւն ունէին անոնց վճիռներըն արգիլելու՝ քան թէ անզօր վարչութեան մը պաղատանքն անոնց որդումներն ընդունել տալու :

Մեր լսածներն հաստատելու համար բազմաթուաց մէջէն՝ ամենէն կարևորագոյները զատելով՝ կը նշանակենք այստեղ, ոչ թէ նոր բան մը լսելու, այլև ընթերցողաց յիշողութիւնն ամենին մոռք :

Եւ ահաւասիկ անոնց համառօտութիւնը .

Ա. Չարնաննախի խնդիրն, որ չորս տարիէն ի վեր չար ու չար մնացած . երեսի թէ բարի տանճախ երբէք եղած կամ ըլլալու միտք ալ չունի :

Բ. Աղթամարայ կաթողիկոսութեան խնդիրն . որ նախորդ Գևողիկոսին սպանուելէն հազար անզամ առաւել ինքզինքն սպանել տուաւ միամտաբար . և որ դեռ բարոյապէս պիտի սպանուի՝ փառասէր (և եպիսկոպոսութենէ յառաջ կաթողիկոսութեան խիստ փափաքող) Վարդապետի մը թելադրութեամբ, մինչև որ նա ինքն Խաչատուրին աթոռը բազմի :

Գ. Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդիրն . որ նոյն իսկ Աղթամարայ կաթողիկոսութեան խնդրոյն հետևութիւնն է . և որ Աղթամարայ աթոռին ցանկացող նոյն Վարդապետին թելադրութեանը շնորհիւ՝ ջորւոյ պատիւն անզամ Նիկողայոսին տալու կը զլանայ, այն մասը , որ իր Եկեղեցւոյն դաւանութիւնը մենէ բիւր անզամ աւելի լաւ ճանաչել կը կարծէ և պաշտպանել կուգէ :

Դ. Լրագիրներուն Խմբագրաց կողմանէ առ Վարչութիւն

ուղղուած խնդրագրոյն խնդիրը . որ ազդարարութեան մանաւանդ՝ քան Թէ աղերսի նշանակութիւն կը պարունակէ . և որ աւելի սարսափ ու շփոթութիւն կը պատճառէ Պատրիարքարանին՝ քան ամդորրութիւն:

Ե. Հուսաւորչեան անուն ընկերութեան խնդիրն . որ հայոց Եկեղեցին բարեկարգելու համար (1) նախնական դրութեան պիտի դիմէ եղեր, և հետևաբար իրեն ազգային Եկեղեցիէն դուրս չելնելու պայմանաւ (2) անկիրականաց կրօնակից պիտի հարմարուի եղեր : Այս խնդիրն ալ ըստ ինքեան շլակն կ'երևի մեզ, որ առաւել աղքատութենէ կամ պաշտպանութեան կարոտութենէ՝ քան բարեսէր սկզբունքէ ծագած կը համարիմք զայն . և Եթէ կրօնամոլ սկզբունքալունի, հիմակուընէ կըսեմք, որ առաւել նախատինք՝ քան բարօրութիւն պիտի մատակարարէ՝ Թէ Մայր կրօնին և Թէ Ազգին :

Զ. Երևի Թէ այսչափ մեղացս վրայ՝ վեցերորդ մի ևս էր պակաս, որ այս ալ քանի մ'օրէն ի վեր յերևան ելաւ . այն է, վերի մէկ անկիւնը սև ու վարը ճերմակ, երկայնաձև (չեմ զիտեր ինչ ինչ կղերական խնդիր պարունակող) ահազին

(1) Բարեկարգութիւն սիրողը պէտք է նախ ժողովուրդը բարեկարգէ, եւ ժողովուրդով Եկեղեցականները, եւ այս Երկուքով՝ Եկեղեցին բարեկարգեա կը գտնէ եւ ոչ Թէ նոր բարեկարգութեան կարօս : Բարեկարգութիւնը Եկեղեցիէն սկսիլն ու տանը դուռը տանիսին վրայէն բանալը՝ մի եւ նոյն նշանակութիւնն ունին :

(2) Այդպէս խոստացած են Երեկուան Պապականք եւ այս աւուր Երիցականք . եւ հիմայ նոյնը կը կրկնեն վաղուան Եպիսկոպոսականք : Այդ բանին (այսինքն հայոց Եկեղեցիէն չզատուելու խօսմունքին) ոչ միայն չենք հաւատար, այլ եւ կը պնդենք՝ Թէ խոստացողներուն պէս հաւատացողներն ալ չարաչար խարուած են յայդմ մասին: Ուստի այս օրուընէ իմաց կու տանք այդ Ընկերութեան, եւ կըսենք, Թէ այդ տեսակ չ'եմ զատուիր ըսելն ու արանք ըսելը՝ մի եւ նոյն նշանակութիւնը կը պարունակեն
Digitized by Google

Թուղթ մը, որ ամէն Թաղի մէջ ներկայանալու և քաղաքացի (սիրոային) եմ ըսողէն ստորագրուելու սահմանուած էր :

Եւ այլ սոցա նման ուրիշ խնդիրներ .

Այս վիճակին մէջ վերոյիշեալ զէյթունցի իշխանաց կրօնափոխութեան լուրն ալ յանկարծ տարածուեցաւ, որ եօթերորդ Թուանշանաւ՝ խնդրոց առաջին կարգն անցնելով՝ կարծես Թէ հայերը շանթահարեց :

Ժողովուրդն այս հանգամանքէն դժգոհ և սաստիկ խռոված՝ Թէ և չուզեց անտարբեր կենալ այս վերջնոյն, բայց և այնպէս, բուն իսկ արժանաւորութենէն աւելի ծանրութիւն մը չտալու համար խնդրոյն, իր ուժին հետ կշռել չուզեց, բայց և այնպէս, առաւել ևս վտանգաւոր համարեց զայն՝ քան որ էրն իսկապէս : Ուստի և սկսաւ այնպիսի մեկնութիւններ տալ ու վճիռներ կտրել, որ կրնամք ըսել Թէ անկարելի կը Թուի մեզ համառօտիւ նկարագրել աստ :

Զէյթունցւոց այս կրօնափոխական խնդիրը, Թէ և ըստ ինքեան կրօնական չէր, բայց մաս մը հայեր այս ալ կրօնականի կարգն անցնելով՝ վերոյիշեալ վեց խնդրոց հետ խառնեցին և սկսան այնչափ շփոթ և այնչափ խառն ձայներ հանել, որ Պատրիարքէն բռնէ մինչև ժողովականաց վերջին անդամը շուարեցան, և հազիւ հազ ինքզինքնին անձեռնհաս համարելով՝ ամէն խնդիր (ապագային չըսելու համար) վերնագոյն իշխանութեան մը որոշման ձգեցին. և ժողովրդեան այս մասին աններդաշնակաւոր (cacophony) ձայնէն և անկէց առաջ եկած զլիսի խժխժուքէն պահ մը ազատեցան :

Անկողմնասէր անձ մը, կամ լաւ ևս ըսելով՝ անտարբեր աչք մը՝ ուր որ կատարելութիւն կամ պակասութիւն կը տեսնայ՝ դաստիարակութեան արգասիքն ալ միատեղ կը նշմարէ: Ձենք ուզեր ԾԼԻ խարեր համար ճշմարտութիւն մ'սրողել, և

կըսենք բացաբանակապէս՝ թէ հայերս պնուամբ եւեմ ֆիրացու ենք, և ներդաշնակութիւն չունենալու համար՝ կրնամբ ըստ՝ թէ անոր մէջ ալ խակ ու պակասաւոր կը գտնուինք :

Մեր պակասութիւնները յիշելու թէև միտք մը չունինք, բայց անոնց ամենէն վնասակարն ալ չենք ուզեր սրողել, զոր մեր ամէն տառապանաց դարաւոր աղբիւրը համարած եմք :

Ազգ մը, որ իշխանութիւն (autorité) կուզէ՝ միանգամայն իշխանութեան դէմ կը յարձակի, կը բողոքէ (1) և չարաշար կը ճախատէ զայն . այն Ազգը, կըսենք, ստրկութենէ ուրիշ ապագայ չունի (2) : Որովհետև այսպիսի ընթացքով՝ ամէն անհատ՝ ամէն մէկ անհատին դէմ կը մաքառի և ամէն մէկ անհատ՝ ամէն մէկ անհատէն կը ճնշուի և կը տրտնչայ . մէկ խօսքով, ամէն անհատ՝ ամբողջ ազգին կամ ամեննեւն, և ամբողջ ազգը կամ ամենը ամէն անհատին դէմ փոխադարձաւր կը գմտին, և ասոր կըսեն խառնափնդրութիւն (ՅԵԶԱՕՑ) կամ թոր և բոհ զիճակ :

Այս դրութեամբ երբոր Ընդհանրական և Վեհափառ անուն կրող Հայրապետը կը տժգոհի Սինօդներէն, Կաթողիկոսներէն, Պատրիարքներէն և ընդհանուր ժողովրդէն։ Երբոր Պատրիարքը կը տժգոհի իշխաններէն, Ժողովներէն, Եպիսկոպոսներէն, Առաջնորդներէն Թաղականներէն և ժողովրդէն։ Նոյնպէս

(1) Երկն Աւարայրին, մեր դիտողութեանց դէմ գրած յօդուածին մէջ ընդհանուր ժողովոյն իշխանութիւնը կը պաշտպանէր . իսկ յետոյ նոյն իսկ իշխանութեան օրինաւոր քուէին (Կաթողիկոսական ընտրութեան) դէմ չարաչար եւ անիծիւք բողոքեց։ Տես Ելի 6⁰ Թուլյն յաւերլուածը (1866 Օգոստ. 10)։

(2) Մեճնուայր Հավատիաին մէջ այս նիւթիս վրայ բնական եւ իմաստալից յօդուած մի կայ, որխիստ աղեկ կը բացատրէ՝ թէ ինչպէս պէտք է իշխանութիւնները յարգել. եւ թէ այժմեան ատենի պահանջմանց համեմատ վարուելու համար ինչ ընթացք պէտք է բնոնել։ Տես Մեճնուայր Հավատիս թիւ 678.

և ժողովուրդը երբոր կը տժգոհի Հայրապետէն, Սինծրներէն, Պատրիարքներէն, Խշաններէն, Թաղականներէն ևայլն; ևայլն . Վերջապէս իրեն ամէն մէկ անհատէն ; և տեղական Կմուավարութիւնն ալ ամբողջ Ազգէն . բնական է որ ամէն բան խանգարման մէջ իյնայ և Ազգն անիշխանութեան տակ մնալով՝ իր զիսուն ճարը տեսնելու դիտաւոյնութեամբ՝ իյնայ աշխարհիս հոսանքին մէջ, որ ուզած տեղը տանի զինքը:

Ազգի մը նիւթական և բարոյական անիշխանութեան ատեն՝ մէկ երկուքն ինքզինքնին կ'օծեն, այսօր Զէյթունցին կաթոլիկ կըլլայ. հետևեալ օք՝ Հաճընցին, միւս օք՝ Աղպոթանցին, ուրիշ օր մը՝ Պիթլիսցին, Էրգինկեանցին, Պահցէնիկցին Աայլը :

Ուրիշ տեղացի մը երիցական կըլլայ և ուրիշ մը եպիսկոպոսական, բարեկարգական և այլայլական : Այս դրութեամբ՝ կրնայ ըլլալ ; որ քիչ ատենէն այս Ազգին մէջ գտնուին նաև անաստուածեանք, կիսաստուածեանք, միաստուածեանք, քառաստուածեանք, բիւրաստուածեանք, անարատինեանք, անկրօն հաւատացեալք, և վերջապէս աշխարհիս և երեակայութեանց մէջ գտնուած ամէն տեսակ աղանդաւորք ու խառնակրծնականք, և կրնայ ըլլալ կըսենք, որ ատոնց ամէնն ալ իրենց կրօնքն ի պաշտօնէ դաւանին Ասոնց բոլորն անջուշտ անիշխանութեան բարձի տակէն ելած՝ բնական հետևութիւններ են . և զարմանալու բաներ չեն :

Ստուգիւ, եթէ տարօրինակ Ազգ մը կայ աշխարհիս վրայ, որ իր մասնաւոր յատկութեամբն ուրիշ Ազգաց հաջիւ հազ կը նմանի, անիկայ մեք, Հայերս, պէտք է ըլլամք :

Եւ ահաւասիկ ինչիւ համար .

Մեր Հայոց համար իշխանութիւն ըլ կրնար ըլլալ, որովհետեւ իշխանը մենք ենք, և իմ կարծիքս այն է, որ եթէ Թագ մը առաջարկուի ազգին՝ ամէն հայ իր գլուխն անոր տակը

պիտի դնէ, և հետևաբար Հայաստանի Թագաւորներն առանց փոխարքայի պիտի մնան Եւ որովհետև մեր Ազգային ամենէն Գերազոյն իշխանութիւնը կաթողիկոսութիւնն է, զարմանալու չէ, երբոր ամէն հայ ինքզինքը կաթողիկոս համարի և նոյն պաշտօնին վերաբերեալ ամէն գործ ու գաղտնիք իմանալ ուզէ: Այս ըսել է ամէն ազգային իշխանութեանց վը-քայ իշխան կանգնիլ և ամէն խնդրոց տիրել: Այս խնդիրը կթողումք առայժմ, և քանի մը խօսքէն յետոյ դարձեալ կը շարունակեմք:

Մտքերնիս ազնուապետութիւն (aristocratie) քարոզել չէ և չեմք ուզեր առանց բացատրութեան ձգել այս խնդիրը:

Աշխարհիս վրայի՝ Թէ միապետական ըլլայ, Թէ սահմանադրական, Թէ հանրապետական և Թէ կարմրական՝ ամենէն լուսաւորեալ, բարեկիրծ և ազնիւ ազգն այն է, որ իրեն իրաւունքը զիտէ ճանաչել, օրէնքը զիտէ պահել և անոնց վրայ հսկել. զիտէ, այսինքն և մէկ խօսքով, իշխանութիւնը (autorité) յարգել և անոր հնազանդիլ: Այս սկզբունքով ազգ մը հչ կը բռնանայ և հչ կըստրկանայ:

Օրէնքն ըստ ինքեան բան մը չեն, բայց երբոր դու կը շիշինես այն օրէնքը՝ դու ինքդ պէտք է հնազանդիս անոնց, ապա Թէ հչ՝ քու շինած օրէնքովդ դու զքեզ կը դատապարտես, որ քո Թրով զքեզ սպանելէն չը տարբերիր:

Սպարտացին, որ հին աշխարհին ամենէն ազատ, ինքնիշխան և ամենէն զօրաւոր ժողովուրդն էր, ոչ միայն օրինաց հնազանդիլն իրեն սկզբունք ընդունած էր, այլ կարծես Թէ իր զօրութեան սնունդն օրէնքէն կառնուր, և հլութիւնն ու օրինապահութիւնն այնչափ արմատացած էր այս ժողովրդեան մէջ, որ իր Թագաւորներն անզամ պարծանք կը համարէին ոսկէ Թէ՝ ի Սպարտա հզօր են Օրէնք քան զԹագաւորս: Եւ այս-

պէս՝ չէ թէ ժողովուրդը օրէնքին, այլ օրէնքը ժողովրդեաս կը տիրէին։ Սպարտացիք հնազանդիլ բայը հրամայելին մայրը՝ կը համարէին. անոր համար, որ առաջինն առ երկրորդն կառաջնորդէ, հետևաբար հնազանդողն ու հրամայողն օրինաց շնորհքը և իրենց ազատութիւնը հաւասարապէս կը վայելէին։ Այժմեայ ժողովրդոց մէջ՝ շատերը (չեմք կարծեր թէ հայերն ալ ասոնց կարգէն ըլլան) նոր սպարտացի կը համարուին, ուստի ալ հարկ չմնար ուրիշ օրինակներ բերելու։

Երբոր ժողովուրդ մը իր օրինաց կը հնազանդի՝ միանզամայն ինքզինքը կը պատուէ, իր իշխանութիւնն ու ազատութիւնը կը պաշտպանէ։ Աշխարհիս վրայի ամենէն զօրաւոր իշխանն ալ զիտէ, որ ի շնորհս օրինաց կ'իշխէ, և այն օրէնքն ու իշխանութեան զօրութիւնը ժողովրդեան արդար կամաց և անոր պաշտպանողական ուժին արզասիքն են։ Շնորհիւն Աստուծոյ իշխողն անզամ այս ստորոգութեան տակ է, վասն զի անոր զօրութեան աղբիւրը ժողովուրդն է, որովհետև այն զօրութիւնն ալ ժողովրդէն ելած է (έπανέ), քանի որ բազմաց ձայնն Աստուծոյ ձայնը կը համարուի։ Այն ժողովուրդը՝ որ վիվա, զիրօ, հիւռուա, կամ կեցցէ կը զոչէ իր իշխանութեան, ակնածական համոզմամբ և անպատիր ձայնիւ, նշանակել կուզէ։ Թէ ինք իրեն օրինացը զօրութիւն մատակարարող աղբիւրն է. զօրութիւն մը՝ որ իշխանութիւն ձևացած, զինքը կը պաշտպանէ։ Եւ այն, որ հակառակ ձայն հանել կուզէ, կը պահանջուի, որ իրմէ բղխելին աւելի անուշ և աւելի կենաստու լինի։ Իսկ եթէ բղխածը խղուցնելու կամ աղբիւրը բոլորովին ցամքեցնելու մտօք կը մումուայ. այնպիսւոյն համար ոչ միայն մարդկային սեղանի վրայ սնունդ, այլ երկրագնտիս վրայ գերեզման անզամ չկայ։ Այս նիւթին վրայ այսչափս բաւ համարելով՝ կը դառնամք մեր խնդրոյն։

Վերև ըստնք թէ հայերն ինքինքնին իշխան կամ կաթողիկոս համարելով՝ ամէն լնդրոց տիրել կուզեն։ Ասիկայ գէշ յանկութիւն մը չէր, վերոգրեալ բացատրութեանս նկառմամբ, եթէ հայերն ալ (Իին սպարտացւոց և նոր սպարտացի համարուող ազգաց պէս) մյն սկզբունքն ու մյն առաքինութիւնն աւնենային։ Բայց հւր են հայք և հւր այլք։

Եւ հւր է այն իշխանութիւնը, պիտի հարցնէ մէկը մեզի։
Կը պատասխանենք.

Աշխարհիս սկիզբէն երկու իշխանութիւն կային և պիտի կենան մինչեւ ի կատարած աշխարհի։ Այս իշխանութեանց մին կրօնական է և միւսը բաղաքական։ այսինքն, մին բարոյական և միւսը բնական։

Հայերը բնական իշխանութիւն չունին, և ունեցածնին մրայն բարոյականն է, և եթէ բարոյականը բնականէն ազնիւ կը համարուի, հայոց ունեցածն ալ մյդ է (1), որուն համար իր ազնութեանը վայելուչ սէր, յարգանք, պատիւ, պատկառանք և օրինաւոր հսկողութիւն կը պահանջուի։ Ուստի մեք ալ մեր կողմանէ մյս կը հարցնենք,

Եւ հւր է այդ ժողովուրդը։

Եթէ կան այնպիսի ներանձն հայեր, որ ինքինքնին լըռութեան նուիրելով Ազգին վիճակին վրայ միանգամայն կը մտածեն ու կը խոկան, այնպիսեաց խօսք չունիմք։ բայց շատերէն (իշխան և ժողովուրդ, փոխադարձաբար) անարգանք, թշնամանք և նախատինք կը կրէ այս Բարիյական իշխա-

(1) Մեր նկատումը միայն եկեղեցական իշխանութեան համար չէ, այլ Կառողիկոսականին ու Պատեհարքականին ենք՝ Վարչականին համար ալ, որ մինչեւ Թաղականին կը հասնի. եւ որ ասոնց ամենքը՝ առաքինական եւ անծնանուիրական իշխանութիւններ կը համարիմք։

նութիւնն և անով Ազգին ամբողջսւթիւնն անխշանութեան մէջ կը գտնուի : Մենք միայն սա կրտեմք, թէ երկու իշխանութեանց ազնուազոյնին յարզը չճանաչող ազզը՝ միւսին մէջ ուսք դմելու տեղի չունի . և իր կրած ճակատազիրն ուրիշ բան չէ՝ բայց եթէ արժանաւոր հատուցումն իր օրինականց ընթացիցը, և ասկէ կը հետևեցնեմք թէ հպատակն իրենց ճամբէն իրբեք ջղած չեն, որովհետեւ չեն ուզած ոչ գիտցածնին մռուանկալ և ոչ չը գիտցածնին ուսանիլ :

Բայց ինչ ընթացք է այս . և հեր կը տանի զմեր

Տեսնենք Մշկն Թիֆլիսի Թղթակիցը . թէ ինչ ճամբայ ցոյց կուտայ և ինչ տեսակ իշխանութիւն վարել կուզէ մեր վրայ : Մտիկ ըրէ, «Երբ սա զայ (Գէորգ նորընտիք Ռ. Կաթողիկոսը) էրմիածին եթէ Ամվազովակոն չի ձեռնադրել եպիսկոպոս և Պարգսին (Քալայիան) առաջ չի քաշել էն ժամանակը սորա վրայ ժողովուրդի ունեցած վաց կարգիցք կը վերանայ , և այլն (1) »

Այս գրողն ինքն իրեն ճշմարիս մարդ անունը կուտայ Բայց ինչ ըսել է այս . Միթէ կաթողիկոսի լաւութիւնը կամ գէշութիւնը այդ պայմանն կախումն ունի . կամ թէ այդ երկու անձինք կաթողիկոսական վորձաքամք են, և կամ, աղեկ կաթողիկոս մը այդ անձանց մին եպիսկոպոս ձեռնադրելով և միւսն առաջ քաշելով պիտի վաՅանայ : Այդ ինչ ամենախեղն տրամաբանութիւն է, և ինչ կակազոտ Դէմոսթենէսութիւն.... Այսպէս կը տրամաբանէ նաեւ Միլն . իր Զ. Է. Ը. և Ժ. Թիւերօւն՝ մանաւանդ այս վերջնոյն մէջ : Բայց ինչ կրնաս ըսել, Միլն ու իր Թղթակիցն այնպիսի հայեր են, որ աղօթա-

զիրքը կը բանան և անոր մէջ հայրոյութիւն կը կարդան ,
բայց և այնպէս ինքզինքնին իրապէս կաթողիկոս կը կարծեն .
ժեֆեռնուն ժիշեան չես եա :

Ինչ՝ կը բախս , ընթերցհղ , այս պայմանաւ և այսպիսիներով՝
կրնաս կաթողիկոս ըլլալ , կրնաս Պատրիարք , Երեսփոխան ,
Ժողովոց անդամ , Առաջնորդ և Թաղական ըլլալ : Եւ այս-
պիսի անիշխանութեան , ու թոհ և բոհ վիճակի մէջ , կրնաս
Ժողովուրդ և ճշմարիտ Հայ Ժողովուրդ ըլլալ . . . Ըսենք թէ
դու քեզի կարևորութիւն չես տար , և անոր համար՝ եղեր կամ
չես եղեր , հոգդ չէ . բայց տեղական կառավարութիւնդ ալ
զքեզ բանի տեղ չդներ և զքեզ չպատուէր . . . ատոր ինչ կը-
սես , և կրնաս զոհ ըլլալ . . . Եւ դու , ըսէ ինձի , լո՞ղդ Հայ ,
Դուն ալ ատոր վրայ զիտցածդ կրնաս գրել , կրնաս մտքինդ
բացատրել ազատաբար , կրնաս այդ վիճակին դարմանը ցոյց
տալ , կրնաս ըսել հայուն թէ լաւ է սահմանադրական ըլլալ՝
բան սահմանադրութիւն ունենալ : Ոչ , չեմ կրնար յիրաւի .
Չեմ կրնար Հայ կոյրին՝ կարճատես , կամ հաւկուր անզամ
ըսել , հայերէն լեզուաւ : Մտքի և համոզման ազատութիւնն
օրօրի տեղ կառնու հայն , և արթուն կենալու համար՝ կը
քնանայ . . . Հայուն հետ խօսիլ . ինչ դժուար բան :

Այս , զէյթունցին այսօր կերթայ , ետևէն ուրիշները կերթան .
վասն զի քո մէջդ կամ քոյ զետնիդ վրայ կոխելու տեղ չունին
և քո սեղանդ զիրենք չի սնուցաներ : Կերթան , բայց անոնց
զացած տեղը մօտէ . վասն զի այն ալ մեր տանը թէկ օդարգել՝
բայց պայծառ մէկ սրահն է (1) . իսկ դու որ վաղը պիտի պար-

(1) Հիմայ այս զէյթունցիք կաթոլիկ լինելով՝ դարձեալ Հայ մնացին՝ թէ
Հայութենէ դուրս համարուելով Մինէացի դարձան : Այս խնդրոյն լուծումը
— “գոյ հեղինակին կը յանձնենք , որ զմեզուասորէ յայսմ մասին :

տաւորիս , նւր , և նր կողմ պիտի երթաս ... Չեմ գիտեր ...

Քանի որ խնդիրն այս նիւթերուն վրայ է , մենք ևս անիշխանութեան ազդեցութեանը տակ պիտի իյնանք , և հետևաբար՝ պիտի պարտաւորիմք ամենէն տրտնչալ և զամենքը դժգոհնել : Եւ որովհետև առարկանիս զէյթունցւոց խնդիրնէ , փոքր ինչ մաղենք զայն ու տեսնենք թէ ինչ ինչ յերևան կ'ենէ :

Ենթադրենք թէ զէյթունցւոց վրայ տեղեկութիւն չունիմք և այնպէս համարենք թէ չեմք գիտեր , ինչու զարկին , ինչու զարնուեցան , և յետոյ իշխանաց երկուքն ինչու Պօլիս եկան , վերադարձան իրենց երկիրն ու ապա չորսը միատեղ Պօլիս հասան , բանտին մէջ հիւանդացան , անկէ ելան Պատրիարքարան դարձան ու հոն մնացին ու մնացին : Ինչ էր սոցախնդիրը , և ինչու համար յուսահատեցան այս մարդիկն ու կրօնափոխութեան ապաւինեցան : Ժողովրդեան քիչ խօսող մասն այս կը հարցնէ , և ոչ ոք չկրնար տեղեկութիւն տալ անոր : Բայց երեխ թէ Պատրիարքարանն ալ Ազիզ փաշայի առ Բ. Դուռն հաղորդածէն աւելի տեղեկութիւն չունի այդ մարդոց գործերուն վրայ , և այս է զարմանալին :

Մեր բուն նպատակը , որ իշխանութիւնը պաշտպանելով՝ անիշխանութիւնը դատապարտել է , չենք կրնար այս Ազգային (ինչպէս վերն ալ բացատրած ենք) լոկ բարոյական Իշխանութիւնը գոհել հէ կառավարուող և հէ կառավարող մասին : Այսինքն , ինչպէս Ժողովրդեան առ Վարչութիւն՝ նոյնպէս Վարչութեան առ Ժողովուրդն ունեցած պարտազանցութիւնները՝ հէ միայն ապօրինաւոր կը համարիմք , այլ և կը դատապարտեմք զանոնք փոխադարձաբար , իրրև զակզրնապատճառս անիշխանութեան :

Այս սկզբանց վրայ յենլով՝ չեմք կրնար Վարչութեան անհոգութիւնը , կամ պակասութիւնը և կամ անզիտութիւնը չը

դարպագարդով յայսմ մասին։ Եւ ասոնց վրայօք բացառութիւննիւ կուտամք, թէ ինչիւ համար .

Արհեստներու և զիտութիւններու մէջ՝ մարդոց ունեցած սեղեկութիւնն երեք ստորոգութեան կը բաժնուի։ Առաջինն է (եր և իցէ արհեստի և զիտութեան համար կըսեմք) զիտնալ . Երկրորդը՝ պակասաւոր գիտնալ . Երրորդը՝ չգիտնալ։ Արհեստ մը կամ զիտութիւն մը լաւ զիտցող և ի գործ չդնողին՝ Անհոգ ամունը կուտամք ու կանցնիմք։ Բայց այն, որ չկրնաւր զոհացնել իրեն հետ ուղղակի յսրաթերութիւն ունեցած անց ձինքն իր գործով, այն տեսակ արհեստաւորին կամ զիտնաւկանին Պակասաւոր անունը կուտամք։ Խոկ այս ինչ արհեստին կամ զիտութեան տեղեկութիւն չունեցող անձ մը, երբոք երեւան կիմնէ ու չի զիտցած բանին մէջ կը մտնէ - այնպիսի մարդոր, կըսենք, այն անձին կը նմանի, որ կերթայ առաջն երած զործարանին մէջ մտնելով՝ իր շահաւած և բանոնց վրայօք բռն։ Մը չը բառ նիւթերուն կամ թէ մերձնաներուն վրայ ձեռք կը դնէ, և խելքին փշած կերպին զանոնք վարելու հաց մար՝ առնե բառ կը կոտրէ՝ կը թաքէ և վերջապէս գործարանը տաքն ու վրայ կը դնէ. այնպիսուց ոչ Անգես անունը կուտամք։

Անցու առնե բառ, կառավարութիւնն ոչ իր արհեստուն ու զիտութիւնն անի. ուստի և Վարչութեան անդամներն այս արհեստուր կը պահանջուի։ Անցու (incompréhens.) մէջ բքնականացար բառաւոր յէ Վարչութեան մը մէջ. եթէ ընդունի ու բնակութիւն իրենց արհեստները բառ պահանձ. առա թէ աչ, բնակութիւն կառավարութեան գուստածար խորհրդան նախոր՝ նախոր կը ըստու Վարչութիւնն ոչ նայուց նախոր։

Տե՛ս պահանձան առավելաներուն մէջ զիտութեան խորհրդ և առա մէջ բնակութիւնը և անձնութ թէ գործա-

Թեան անդամները որ ստորոգութեան կարգը կը գտնուին կառավարական արհեստին մէջ :

Եթէ լսենք՝ թէ զէյթունցւոց հին յանցանաց համար չորս իշխաններն այս տեղ բերուեցան, ատով կառավարութիւնը զրպարտած կը համարուիմք . որ մեք, մեր բաժնին համար, ամենկին չեմք կրնար ընդունիլ : Եւ որովհետև ատոր քննութիւնը կառավարութիւնն ըրաւ այն ատենին, և տեսաւ որ զէյթունցինները գրգռող եղելութիւնքն առաւել պատճառներ տուած էին երկկողմնակի կոտորածին՝ քան զէյթունցիք եղելութեանց, ամենայն արդարութեամբ խնդիրը լուծեց . և միմիայն կոտորածի պատճառներն երկկողմնակի յանցանք համարելով՝ պատիժներն ու շնորհքներն անոնց չը զլացաւ :

Կառավարութիւնն ասով ալ չզոհացաւ, այլ ժողովուրդն առաւել ևս խնայելու և անոնց խնդիրքն աւելի մօտէն քննելու դիտաւորութեամբ, երեք պատուաւոր անձինք (ինչպէս որ ամենքը զիտեն) ուղարկեց Կիլիկիոյ կողմերն, իբրև քննիչ(1), որ տյապիսի խնդիրները լաւ քննելու կարողութիւն ունեցող անձինք էին : Սոքա վերադարձան շատոնց ի վեր, և յայտնի է որ այդ հին խնդիրն ալ լիովին կատարուած կը սեպուի : Ուստի ասկէ ևս կրնամք մակարերել՝ թէ զէյթունցիք հին խնդրոյն համար բանտարգուած չեն. և մեք ալ ասկէ աւելին հչ կրնամք զիտնալ և հչ կրնամք խօսիլ : Իսկ եթէ մեր կարծածին հակառակն ելնէ խնդիրն, այն ատեն, ատի Դրանը զիտնալիք բանն է, լսելով կանցնիմք . քանզի ատոր հչ մեք կրնամք խառնուիլ և հչ յայդմ մասի անձեռնհաս Վարչութիւնը :

(1) Սոցա մին Տաճիկ, իսկ երկուքն Հայազգի էին՝ եւ այս երկոցունց մին՝ Մարգիս Էֆէնտի Աղապէկեան՝ Էջմիածնական Հայոց, եւ միւսն՝ Տօքթէոն Տավուտ Էֆէնտին՝ Հռոմէական Հայոց կողմանէ ղրկուած էին:

Բայց համարելով միշտ՝ թէ հին խնդիրը շատոնց լրմնցած է, կ'ենթադրենք որ զէյթունցւոց նոր խնդրոյն մէջ՝ Ազգային փարչութիւնն ալ իրեն վերաբերեալներն ունի, և կրնայ հարկեղած ատենին միջնորդ կանգնիլ Դրան ու զէյթունցւոց մէջ։ Ինչ ըրաւ Վարչութիւնը, երբար զէյթունցիք իրենց երկրէն, իրքներունաւոր և ժողովուրդը կեղեքող անձինք (1), ի Կ. Պօլիս բերուեցան, և իրենց օրինաւոր պատիժը կրելու համար՝ մահապարտ անձանց գրեթէ քթերուն տակը բանտարգուեցան. և ի վերջոյ՝ երբոր բանտէն դուրս ելան՝ ու ժամանակէն ի վեր կըսպասէին. ինչ ճամբայ, կամ ինչ միջոց բռնեց Վարչութիւնն այս փափուկ խնդիրը մաղելու համար :

Չենք ըսկը թէ Կառավարութեան օրինաւոր պատիժն արգիլել ուզէ Վարչութիւնը, քան լիցի. բայց երբոր բանտարգեալներն՝ իրենց յանցանքը չգիտնալ ձևացնելով՝ կը բողոքեն ու դատաստան կը խնդրեն, այն ատեն խնդիրը Վարչութեան վերաբերութիւն կունենույ. և կը պարտաւորի (Կառավարութեան սկզբանցն համեմատ) քննել զայն, զհնէ իմանալու համար, թէ Ազգային կամ Կրօնական խնդիր մը կայ աստոք մէջ։ Եւ որովհետեւ, նոյն իսկ ժամանակին, մէկն ալ ելած, ինք իր զլիսուն կամ տեղույն ժողովրդեան թախանձանօք, Կիրիկիոյ կաթողիկոս օծուած էր, և այս խնդիրն ալ լոկ կրօնական բլլալուն ու կուգէմ չեմ ուզեր բաողներ գտնուելնուն համար՝

(1) Հսած ենք, թէ Զէյթունի բնակիչք՝ այս ամբասանութիւնը հաստաեեր են, իրենց առ Բ. Դուռն ուղղած մահսերագրովը բազմաթիւ ատորագութեամբ։ Նոյպիսի մահսերագիր մը ուղղուած է կ'ըսեն՝ առ Պատրիարքարան, նոյն իսկ ստորագրութիւններով։ բայց Բ. Դրան եկածին հակառակը։ Հայոց մահսերները միշտ ասանկ են, եւ երեւի թէ մշտնշենաւոր մօտա է Հայոց մէջ։ Զէյթունցի իշխանաց (առ Մէմնուայշ Հավասիս) գրած նամակներն ալ այս մօտային էին, այսինքն, սատան—հեթեակ, Վարդան—Վասակ, կամ սեւ—ճերմակ եմք, ըսելով՝ բանից անզամ գրեցին։

Վարչութեան քննութեանը կը կարօտէր, յայտնի է որ այս երկու խնդրոց համար՝ բեկեկրագին աւելի կարճ ճամբան՝ Կիլիկիոյ կողմը քահանայ կամ աշխարհական քննիչներ հանելն էր : Բայց ըսենք թէ դրամի կամ մարդու պակասութիւնքն արգելք եղան այդ միջոցին . իսկ այստեղ Աղապէկեան Սարգիս Եֆէնտին կար , որ՝ թէ Կառավարութեան և թէ Ազգին կողմանէ՝ մասնաւրապէս քննիչ զացած էր այն կողմերը . և կ'երևակայեմք որ Պատրիարքարանէն խիստ աւելի և մանրամասն տեղեկութիւն ունէր և կրնար ունենալ , թէ այդ երկրի բնակչաց կացութեանը , թէ անոնց անցեալ և ներկայ խնդրոց աղբիւրներուն և թէ Գաւառի փաշային ու իշխանաց մէջ ծագած վէճի պատճառներուն վրայ :

Սարգիս Եֆէնտին , որ իրեն Երեսփոխանութեամբը ծանօթ էր Վարչութեան , կարծիմք թէ խնդրոց վրայօք իրեն ունեցած զիտութեամբն աղ խիստ կարևոր անձ մըն էր . մանաւանդ անոր համար՝ որ Վարչութեան երեք ամիս մտիկ ըրած և չը հասկցածը՝ մէկ աւուր մէջ հասկըցնելու բնական կարողութիւն ունէր : Կանչեց այդ անձը , և հարցնւց . դարման կամ լոյս փնտուեց Սարգիս Եֆէնտիէն , և կամ անոր մէկը դրկեց բան մը հարցընելու , գննէ ժողովրդեան լեզուէն կամ բամբասանքէն ազատելու համար... Զեմք զիտեր . բայց և այնպէս , չեմք ալ կարծեր . վասն զի եթէ Վարչութիւնն Սարգիս Եֆէնտիյին քիթ փշրել ուզեր , անշուշտ խնդիրներն ուրիշ ձև կառնուին , հետևաբար՝ Կառավարութիւնն ալ լաւագոյն բացաւրութիւններ մտիկ ընելով՝ խնդրոյնկը թափանցէր և ըստ այնմ կը վճռէր զայն , և այս կրօնափոխական զայթակղութիւնը կ'արգիրուէր :

Եթէ ստուգիւ կառավարելն ալ արհեստ մըն է , հաւատալու է , որ Վարչութեան անդամներն , երբոր այս խնդրոյն մէջ

այսպէս կը վարուին, ուրիշ գործեր քննելու ալ հարկ չըմնար։ Ուստի, կամ անհոգութեամբ կամ պակասաւորութեամբ և կամ անզիտութեամբ ինքզինքնին կը դատապարտեն. և ասով՝ անիշխանականութեան սկզբնապատճառք կը համարուին, իրենց պաշտօնը նոյն իսկ ընդունած օրերնուն ի վեր . և այս ստորոգութեան կ'ենթարկուի նաև զիրենք ընտրող մասը։ Այս երեք ստորոգութենէ խոյս տալն՝ անհնար կերևի մեզ, և կարծիքնիս այն է, թէ այսպիսի անիշխան դրութեան մէջ, ընտրողք և ընտրեալք, հչ միայն Ազգ, այլ և տասն ոչխար անզամ հովուելու կարողութիւն չեն կրնար ունենալ։

Իսկ թէ մինչև որ աստիճան չարաշշուկ և բօթալից հետեւութիւններ կը պարունակէ այս դժնդակ և անիշխանական կացութիւնն իր մէջ, հայոց Լուսաւորչական մասի ապագային համար, ընթերցողը կրնայ գուշակել։

Մեր իմացածին նայելով՝ զէյթունցւոց խնդիրներու մէկ քանին գանձին, և մէկ քանին քաղաքականին կը վերաբերին։

Եւ ահաւասիկ անոնց ցանկը .

Ա. Պետքի ասքերիյէ անուն (զինուորականութեան փոխարինութիւն) տուրքի խնդիրն . որմէ գանձը տարեկան կը

պահանջէ եղեր, 100,000 դուրուշ .

Բ. Աղնամ անուն (իրենց այծերուն) տրոց խնդիրն. նոյնպէս տարեկանին համար կը պահանջուի եղեր, 50,000 դրշ .

Գ. Տէրունական տուրքի խնդիրն. որ շատոնց ի վեր չեն վճարած եղեր. տարեկանը 25,000 դրշ .

Դ. Զէյթունցի ժողովրդեան տեղափոխութեան խնդիրն. որ կառավարութիւնը գաղթելնին կուզէ եղեր .

Ե. Զորս իշխանի գերդաստանաց վերադարձի խնդիրն . որք այժմ ի Մարաշ կը գտնուին եղեր .

Զ. Զէյթունի մէջ հայ միտիւրի (քաղաքապետի) խնդիրն , որ
զէյթունցիք կառավարութենէ կը խնդրեն եղեր .

Է. Վերջապէս այս, (երբեմն Վարդան և երբեմն Վասակ անուն
առնող) իշխանաց դէպ ի Զէյթուն վերադառնալու
խնդիրն .

Ինչպէս կը տեսնուի , ասոնց և հէ մէկը կրօնական երեսյթ
ունի . հետևաբար Պատրիարքի մը կրօնական պաշտօնին հետ
ամենևին յարաբերութիւն չունին : Սակայն , իբր ազգայնոց
խնդիրք , միջնորդութեան մը կը կարօտին , Վասնորոյ , (քանի
որ մեր բարոյական իշխանութիւնն իր բնական երկու (1) ճիւ-
ղերը չէ կրցած իրօք ունենալ , այս ազգային միջնորդութեան
պաշտօնն ալ կը մնայ դարձեալ՝ Պատրիարքի կամ Պատրիար-
քաց : Եւ որովհետև այս ներկայ դրութիւնը համազգային Պատ-
րիարքարանաց ալ իրաւունք կը մատակարարէ . միջնոր-
դութիւնն ալ անշուշտ ուժւորին ձեռքը կանցնի , որ իր կրօ-
նական կորկոտն աղալու համար՝ ուզածին չափ կը միջնորդէ :
Զէյթունցին ալ սակարկութիւնը լրմնցնելէն յետոյ՝ իր կրօնա-
կան չորս առազաստը կը բանայ քաղաքական հովին դէմ , ու
հողմաղօրիքի պէս՝ կը դառնայ հայ կը դառնայ , իր ցորենը
աղալու համար :

Ուժւորը միշտ իրաւունք ունի . բայց յանուն կրօնի լու-
ծուելու խնդիր մը , երբոր անորոշ վիճակի մէջ կը գտնուի ,
դիմացինին ալ իրաւունք կուտայ այս խորհրդածութիւններն
ընելու . Թէ՛ ինչպէս կըլլայ , որ (Բ. Դրան առջև) Էջմիածնա-

(1) Իշխանութեան այս երկու ճիւղերը բացաւրած ենք մեր Խնդիր Մէյու-
թեան Հայոց տեսրակին մէջ . (Տպեալ ի Փարիզ 1861 .)

կանութեան մէջ շընդունուած խնդիր մը՝ Հռոմէականութեան մէջ ընդունուի : Այդպիսի դէպք մը Էջմիածնայ Կաթողիկոսութեան պատիւ չըբերեր ... Բայց մեք չենք կրնար հաւատալ այդպիսոյն, որովհետև այն զօրութիւնը որ Հռոմի մէջ Հրէութիւնը կը պաշտպանէ՝ յանուն մարդկութեան, չը կրնար Թուրքիոյ մէջ Լուսաւորչականութիւնը արհամարհել յանուն Կաթոլիկութեան . հետևաբար անհնարէ, որ Հռոմէական մը կարենայ Բ. Դրան իրաւացի և արդար պահանջմունքը չնանաչել . որովհետև՝ Եթէ նա Էջմիածնականութեան մէջ տրուելիք պարտքը՝ յանուն կրօնի մերժել ուզէ և յաջողի, անիրաւութիւն ըրած կըլլայ թէ Գանձին և թէ Բ. Դրան դէմ : Եւ Եթէ Բ. Դուռը՝ յանուն Հռոմէականութեան միայն շնորհէ այդ օրինաւոր պահանջմունքը՝ ոչ միայն Լուսաւորչականութիւնը չը պատուած՝ այլ ահազին տարբերութիւն մը ճանաչած կըլլայ արեւելեան և արևմտեան կրօնից մէջ . որ մեր բաժնին համար ամենեին այդպիսի ճանաչման նշոյլ մ'անկամ չենք կրնար նշմարել կամ նշմարել տալ Բ. Դրան վրայ : Իսկ Եթէ ընդհակառակն, գէյթունցիք յանձն կ'արնուն Բ. Դրան. պահանջմունքը կատարելու Հռոմէականութեան մէջ, ինչ որ Լուսաւորչականութեան մէջ կը մերժէին . այդ ըսել կըլլայ, որ անիրաւութիւն ընելու համար միայն՝ կենալ կուզեն եղեր անոր մէջ : Ուրեմն բարի երթան և հազար բարով. Հայերն այդպիսեաց իրենց մէջէն ելնելը բարիք կը համարին :

Բայց ով կրնայ հաստատել, և ով կը հաւատալ, որ Բ. Դուռն այսպիսի դէպքերու վրայ չըտժզոհիր և անոր զզուանք անզամ չեն պատճառեր ասոնք՝ և ասոնց նման եղելութիւնք : Եւ ով կրնայ հաստատել նաև՝ թէ այս դրութիւնը Հայոց կառավարող և կառավարուող մասերուն պարտազանցութենէն

ու նոցաւ անգիտութենէն առաջ եկած անիշխանականութեան պառեղը չէ:

Տես , անդին մնացած անհամար խնդիրները , որ հազար գեյթունցի կ'արժեն , ինչպէս երեսի վրայ մնացած են , և որշափ իրաւունք ունին թէ Բ. Դուռն ու թէ Պատրիարքն ըսելու . Թէ որ կուսակցութեան հաճոյիցը յարմար վճիռ տալու է . քանի որ դուք , մէկ բանին համար սև՝ միանգամայն ներմակ է կը սաւէք: Եւ յիրաւէն . ահաւասիկ կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկութեանց խնդիրներն , որ անիշխանութեան տակը կը տատանին . և հակառակ կուսակցութիւններն օր ըստ օրէ կը զօրանան . հվ կրնայ ըսել՝ թէ ասոնց մէկ կողմը կրօնափոխութեան չլեպիտի դիմէ :

Անդին մաս մը անձինք՝ ազգային կացութեան լաւագոյն վիճակ մը բնտուելու համար՝ շուարած մնացեր՝ ինչ ընելնին չեն զիտեր , և ասոր անոր դռներն ընկած՝ եկեղեցական բարեկարգութիւն անունով բան մը կը մուրան . կարծելով թէ այն է իրենց փրկութեան նամբան . և այս անունով բնտուածնին ուրիշ բան չէ , բայց եթէ կարեկցութիւն: Եւ արդարեւ , հայոց կուսաւորչական մասին պէս՝ ինք իր զիսուն ձգուած՝ ազգ մը չկայ Ցանկաստանի մէջ . ուր կրօնակից պաշտպանութիւնն ազգայնութենէ աւիլի կենդանութիւն ունի: Ուրիշները՝ զաւոններուն մէջ բանտերու կը մատնուին , անգութ աղքատութեան պատճառաւ , և իրենց կրօնքը տրոց փոքրիկ գումարին հետ փոխելով (1) կոնակնին էջմիածնայ և երեսնին Հռովմայ

(1) Պահճէմիկէն ընկունած մէկ նամակնիս , այս վիճակին վրայ տիուր նկարագրութիւն մը ընելով՝ կը զանգաւի այն փաթերաներէն , որ սակարկութեամբ (այսինքն , ընթանիք ունեցողը միայն եւ ո՛չ ուրիշը) , կաթոլիկ

Կաթողիկեաց կը դարձնեն : Եւ ասոնց նման շատեր :

Ինչ՝ դժողակ և մահաքեր անիշխանութիւն . և ինչ շարաշշուկ ժամանակ Լուսաւորչական հայոց համար

Յայտնի կ'երևի , որ այսպիսի անպաշտպան վիճակի մէջ՝ Թուրքիոյ հայը Լուսաւորչական չըպիտի մնայ , և ասդիս անդին տատանելով՝ վերջապէս հայաբար ևս պիտի յարի օտարաց . և Էջմիածնայ Վեհագոյն Խշխանութեան հաւատաքիմ և մեծագոյն մասը պիտի կազմեն՝ միմիայն Ռուսաստանի հայերը . ինչ խեղճ գումար , և ինչ Լիլիկութականութիւն , մինչև անգամ ամենափոքր և աննշան ազգաց առջև :

Եթէ այս անհամբոյր վիճակէն մեզի բարօրութեան տարր մի չգոյանայ և զմեզ կատարելութեան չառաջնորդէ , մեր գանգատներն ալ այն արժէքը չեն կրնար ունենալ՝ ինչ որ ուրիշ իրենց վիճակէն տժգոհ ազգաց համար վերանորոգութեան նշոյլ մը կը համարուի ընդհանրապէս . և այն ատեն՝ մերազգի բոլոր շարժմունքը՝ շուքին հետն ի վեր վագելէն ուրիշ բանի մը նմանութիւն չհւնենար , և անզգայ մեռելութենէ մ'անգամ չըտարբերիր :

Բայց չեմք ուզեր և չեմք կրնար յոյսերնիս կտրել : Քանի որ այդ անիշխանականութեան դառնութիւնները համրեցինք , ևքանի որ այդ անիշխանականութիւնն ալ մեր կամօքը գոյութիւն առաւ . իբրև մարդ , կարող եմք ընկած տեղերնուս յոտն կանգնիլ :

Ճշմարիտ հայն , որ անցելոյն դառնութիւնը կըզգայ , ներկային ամօթը կը կրէ և ապագայէն կ'ահոի , չը կրնար

ընելով կը վճարեն բանտարկելոց պարεքը , եւ այնպէս զուրս կը հանեն : Մեք մեր նամակագիր Քահանային գանգատը լաւ կզգանք , բայց եւ այնպէս չենք կրնար պախարակել փաքերայից մարդասիրական ընթացքը եւ կը պառունք ամեն անոնք , որ իրենց բուն պաշտօնն անթերի կը կատարեն :

այս կացութեան վրայ անտարբեր կենալով՝ ահ մը չըսել:

Վշտացեալ հայուն իրաւունքն է այս. և այս յուսահատ ձայնը՝ մանաւանդ այս օրերս՝ շատէրէն և ստեպ կը լսուի :

Մարդս՝ վարանմամբ ընկած ատենն՝ սթափով մ՝ ինքզինք կը ժողվէ, և ոտիցը վրայ կմնգնածին պէս՝ նախ ընկած տեղւոյն և ապա ձեռացը վրայ կընայի. և ձեռացը փոշին կամ ցեխը՝ մինչև որ չը մաքրէ, հագուստը մաքրելու ձեռնարկութիւն չիներ: Այսպէս ընել կուզեն նաև երեկուան ահ ըսող և այս օրուան սթափօղ հայերն: Այս սթափն այնպիսի բնական տարր մըն է, որ չարակեցութենէն ուրիշ բանով չը սնանիր, բայց և այնպէս, հուսահատին (եթէ նա ուզէ) առաջը կ'իյնայ և բարեկեցութեան կը տանի:

Դնենք այս յուսահատ ձայներուն մէկ բանին, և մտիկ ընենք՝ թէ ինչ կըսեն և ինչպէս կը տրամաբանեն.

Ա. Զէյթունցին գնաց, և երթայ բարհվ. բանզի անոր խընդիրը պըլիկի խնդիր էր, հետևաբար լեցուն սնտուկի կարօտ. ըսել է որ մեր բազմատեսակ կարօտութեանցը չըբաւող սնտուկին վրայէն ծանրութիւն մը պակասեցաւ. ուրեմն այս թեթետութիւնն ալ լեցուած կարօտութիւն մը կը համարինք, և

իրենց և մեզ ազատութիւն, թող ուրախ լնուր տարուի Զէյթուն.

Հանով՝ կանցնիմք ամենէն ստիպողական գործերնուս :

Բ. Մեր կարևոր խնդիրները շատ են, սակայն ամենը մէկէն չեմք կրնար հոգալ՝ մանաւանդ անոր համար, որ մեր բարոյական իշխանութիւնը մասամբ իւիք անձեռնհաս է ինք իր գըլխուն զանոնք որոշելու: Բայց առայժմ, սա ինքնակոչ կաթողիկո սաց անվաւեր վարմունքը ժողովրդեան գայթակղութիւն պատճառելէն յետոյ, օտարաց առջև անոր երեսը կը կարմրցընեն:

ինչ^o ճար և ինչ դարման կրնայ ըբալ ասոնց , և ինչպէս կոկելու է այս խնդիրները , որ նոյն Գաւառներու ժողովրդոց իրաւունքն ալ չկորատուի : Այս երկու խնդրոց լուծման համար Դրան կարօտութիւն չկայ , և ձեռնհաս Իշխանութիւնը միայն կարող է վճռել զանոնք . որոց դատաստանը՝ (քսա եկեղեցական օրինի) երկրին բնակչաց քուէին կամ ձայնին կիյնայ , քննութիւնը՝ Վարչութեան , իսկ վճիռը՝ Գերագոյն Իշխանութեան , որ Էջմիածնայ Կաթողիկոսութիւնն է :

Գ. Մեր ամենէն զգուշալի խնդիրները կրօնական են . և Պօլսոյ Կրօնական մարմնոյն անիշխանութեան մէջ գտնուելուն պատճառաւ , անոնք ալ երերուն վիճակի մէջ կը գտնուէին . ուստի և այս կացութիւնը բարուօքելու համար՝ Գերագոյն Իշխանութեան զօրութեանը . կը կացութիմք . զօրութիւն մը , որ ժողովրդէն բղխելուն համար՝ առաւել ևս ուժ կառնու , և զժողովուրդն առաւելագոյն զօրութեամբ կը պաշտպանէ : Ուրեմն մյս խնդիրն ալ , ուրիշներուն պէս , Էջմիածնայ Կաթողիկոսական Գերագոյն Իշխանութեան կը պատկանի : Այս է օրինաւոր միջոցն , և ասկէ ուրիշ ճար ու դարման չկայ : Վասնզի , ամէն գաւառի , ամէն քաղաքի և ամէն գիւղի մէջ՝ ազգակործան յափշտակութենէն ուրիշ բան չը տեսնուիր : Եթէ Լուսաւորչականն իր կրօնական զգացմամբն ու մտքին ազատ համոզմամբը հաւանած տեղն երթալ ուգէր , անոր ազատութիւնը կը յարգէինք . բայց այնպէս չէ . այլ անիշխանութեան պատճառաւ ամէն տեղ կրակ կը վառուի և Լուսաւորչականն անոր դէմ ձիւնի պէս կը հալի . և այլն և այլն , ասոնց նման ձայներ :

Ինչ^o կըսէ ասոր՝ զգայուն Լուսաւորչականը : Ինչ^o կը պատասխանէ այս ձայնին , որ ընկող ու վերստին կանգնող մարդունման ամէն խնդիր մէկդի կը ձգէ ու նախ և առաջ՝ ամե-

նէն կարևորին ձեռք զարնել կուզէ որպէս զի նոյն մաքուր ձեռք միաներն ալ կարող ըլլայ մաքրելու . ինչ կըսէ այս սթափման բնական ձայնին :

Ինչ՝ կըսէք և դուք, զրպարտիչ, սևումուրիղ և վայրի Ծիլեր ու Ծյի անանուն Թղթակիցներ : Դմւք, անօրէն օրէնսդիրներ, նենգաւոր (1) և շինծու Սողոններ, ինչ կըսէք այս անիշխանական վիճակին. որուն առաջնորդեցիք : Հայրոյիշքդ դուք . և նախատինքդ Հայ զրականութեան, ինչ կըսէք Բայց ահմաւասիկ ժողովրդեան ձայնը, որ մեզի խօսք ցյ՛ Թո-

(1). Ծյի Արգոյ հեղինակն , ♀. Ա. Թահիրեանցի առ Ա. Բ. Մ. գրած նամակի մէջ՝ մեր, Դիտողութեան վրայօք գրուած քանի մի (տես Ծիլն էջ 361 եւ 362) տողերը նենգութեամբ մեկնելով՝ նոյն անձի կողմանէ տեսրի մը համար խոստացուած դրամը . իբրև կաշտոյ կը ներկայացնէ մեր տեսրակին համար. եւ այսպիսի նենգաւոր հիման վրայ իր զրպարտութիւնները ճարտարելով՝ վեց ամիս շարունակ կը Թլուատէ իւր սակաւաթիւ ընթերցողաց ականջին . քանի որ այն խնդիրը Զալալեան Սարգիս Արբազանի Բողոքատերին կը վերաբերէր, որոյ տպագրութեան հաջիւն ալ (Թէ եւ չէինք ուզեր ըսել, որովհետեւ այնպիսի ջնջին գումարի վճարման համար կասկած կամ հոգս ընելն անգամ ամօն կը համարիմք) ղեռ ընդունած չեմք Պ. Ա. Թահիրեանցէն: Ակամայ կը գրեմք այս տողերը, զորս ամօն կը համարիմք հայ գրականութեան, այլ այս ամօնն ալ ծյի երեսին կուտամք, որ գունդպորի եւ մենք ալ տեսնենք Թէ ինչ՝ զոյն ունի :

Նովին նիմնգութեամբ , 1856 յուլիս 24ին գրուած եւ ամենիւկն չհրատարակուած , նամակ մի եւս կը հանէ ծիլն, եւ « Ահա այս տեղ նոյն Պ. Արպմեանի յիշառք նապակն ներսէս Կաթողիկոսին առ Փոխարքայն Մուրավիէֆ յառաջ 48 դրենք » ըսկելով՝ կը դնէ իր 442 էջի մէջ. քանի որ մեր յիշաճն 1851 մայիս 11ին առ Փոխարքայն Վլորնցով գրուած , եւ Երկամեայ անցից Պատմութեան 109 էջի մէջ տպուած նամակն էր: Այսպիսի պարզ խնդիրները մէջ նենգութիւն ընող անձինք՝ շատ պինտ երես ունենալու են, որ կը յանդզնին ժողովրդեան առաջնորդութիւն ընելու. լաւ Ծալականուրիւն: Դիտեմք՝ մէս ամօն ըսուած քանը՝ ոչ՝ կուտաի եւ ոչ ծովու վրայ կը քալէ, բայց պակէ չեմք կրնար հետեւցնել Թէ ծիլերւն վրայ կը ծաղկի , յայսմ մասին:

դուր և զձեզ կը դատապարտէ . Լսեցէք . և եթէ կամիք , դարձեալ մեղանչեցէք (2) :

Եւ յիրաւի՞ , այս ժողովրդային ձայնն այնչափ բազմահունչ է , որ զրեթէ ընդհանուր կրնամք համարիլ այսօր . ուստի և խիստ արժանի ուշադրութեան : Յայտնի է , որ այս ընթացքով՝ Լուսաւորչականութիւնը պիտի հալի և եթէ այս վիճակն յարատեէ՝ զրեթէ վաղը պիտի անհետանայ : Ուստի , եթէ Էջմիածնայ Գերագոյն Խշխանութիւնն , Աղթամարայ և Կիլիկիոյ կաթողիկոսութեանց՝ նոյնպէս և ուրիշ կրօնական խնդիրներուն վրայ ձեռք չդնէ՝ և ժողովրդեան ու իր իրաւանցը վրայ յենլով՝ պաշտօնը չը կատարէ , կրնամք ըսել , թէ հրչափ Էջմիածնայ վիճակներ , նոյնչափ և այլակրօն Հայեր պիտի գտնուին անոնց մէջ . և այսպէս Էջմիածնական միութեան կապը քակուելով՝ Գերագոյն Խշխանութեան սահմանն ալ Ռուսաց սահմանէն անդին չըպիտի անցնի :

Այս կըսեմք , հէ թէ ցնցում մը տալու մտօք , այլ՝ երկու և երկու չորս ընելնուն պէս՝ յայտնի կը տեսնեմք , որ ներկայ վիճակովս , Լուսաւորչականները գահավիժելու դրութեան մէջ կը ցուցնէ : Լսուածին եթէ հաւատամք , [30,000 ի չափ

(2) Մեք չեմք ուզեր այսպիսի լեզու գործածել , բայց ահա կը դնեմք այն Թիֆլիսից Թղթակցին քանի մի տողերը եւ ընթեցողին կը Թողումք դատել :

« Մօտիկներս մեկ տետրակ կարդացինք ♦ . ձանիկ Արամեանի գրուած , որ Հայերին հուր , սուր , բռնութիւն է սպառնում և խորհուրդ է տալիս նոցա . որ տէրութեան հպատակին . էն տէրութեան քաղաքականութեան տակ ճնշել տան իրանց եկեղեցւոյ ազատութիւնը . մէկ խօսքով Ռուսը ումն ուզենայ Կաթողիկոս ընտրէ Հայերին համար ու Հայերից ոչ ոք ձայն չհանէ : ♦ . ձ . Արամեանին ոչ ոք քան ասելու իրաւունք չէր ունենալ՝ եթէ իր տետրակի տակ այսպէս գրէր .

Կաշառքով խիդս ծախուած մարդկութեան սապարեզից դուր գնացած Հարազատ Ռուս ձԱՆԻԿ ԱՐԱՄԵԱՆ .

Ուրեմն մէկ սառն արհամարհանք սորան և սև կնիք սորա ճակատին , կնիքի մէջ փորուած . ՍԱ ԴԱՒԱՑԱՆ է ԻՐ ԱԶԳԻՆ .

(Տես Ծիկն . էջ 523.)

կրօնափոխական տոռազրութիւնք՝ միայն վանայ գաւառէն դուրս ելեր՝ չեմ զիտեր ուր են զացեր : Այսպիսի լուրերն եթէ չափազանցութիւն կամ բոլորովին շինծու համարիմք, չեմք կրնար նշանակութիւն ևս չունին ըսելով անցնիլ : Ասոնք և այսպիսիք հարկաւ իրենց նշանակութիւնն ունենալու են, որ ըստ մեզ ժողովրդեան տժգոր վիճակէն առաջ կուզայ, և այս տժգորութիւնն ալ կրօնական անիշխանութեան և անապաշտպան կացութեան պտուղն է . որուն մէջ ժողովուրդն՝ արդեօֆ սանկի և արդեօֆ նանկի սկսած ատենին, անդիէն մէկը շինծու խօսք մի կը քշէ, և այն խօսքը 30. 40 և 100 հազարներու տեղ կանցնի . խնդիրը՝ թէ և իրականին փափաքողներէն առաջ եկած մըռըն մընէ, բայց պատճառներ ունենալուն համար՝ այս առուր շինծու խօսքը վաղուան օրը ճշմարտութիւն կրնայ ըլլալ :

Այսպիսի սին ու պատիր՝ բայց հայուն սոսկում պատճառող բազմատեսակ զրոյցներու ատեն, և անիշխանական հեստ ու խարխուկ վիճակին մէջ՝ հայն ինքն իրեն կը հարցնէ թէ ինչ պէտք է ընել, և ինքն դարձեալ իր բնական յուսոյն դիմելու համար՝ կը դարձնէ աչքն իր հոգեսորև զրեթէ Քրիստոնէութեան հետ ծնած Գերագոյն Իշխանութեան . այն Իշխանութեան, որ առաւել Ազգային տառապանքին՝ քան թէ անոր երջանկութեանը մասնակից եղած է . Իշխանութիւն մը, որ Տէրութեանց մէջ խաղաղական միջնորդութեան պաշտօնն ունի, որ շատ անգամ այս պաշտօնին մէջ՝ պարզերես ելած է, ի փառս իր կրօնին և ազգին : Այս բարոյական և Գերագոյն Իշխանութեան կը դիմէ հայն, և իրաւունք ունի՝ մանաւանդ այս ատենիս . համար՝ որ անիշխանականութեան արգասիքն իր ձեռօք կը շշափէ, ու խիստ լաւ կզգայ թէ այս կորստական դրութենէ ազատելու համար ուրիշ միջոցով իրեն փրկութիւն չկայ :

Բայց միթէ հայն իր հոգեսոր Գերագոյն Իշխանութիւնը ճա-

Նաշելէն դադրած էր, կամ անոր հպատակած չէր ըստ հոգեւորին մինչև ցարդ. Այն, բայց անոր հեռաւորութենէ մեծամեծ վնասներ կրելէն յետոյ՝ նոյն հեռաւորութեան պատճառանօքն ալ այս վիճակին մէջ, այսինքն, կրօնական անիշխանութեան մէջ մնաց այժմ։

Եւ յիրաւի, կրօնական անիշխանութեան պտուղ պէտք է համարել՝ շատերուն մէջ՝ մաննաւորապէս Աղթամարայ և Կիլիկիոյ կաթողիկոսական իսնդիրները։

Կրօնական անիշխանութեան պտուղ պէտք է համարել, Պ. Պետրոսի Շանշեանց Քրիստոնէական ուսման հմտալից Տետրին համար՝ տրուած, կամ այս

..... Կրօնական ժողովով քննեալ եւ հրամանաւ Սրբազն Պատրիարքի..... Վաւերացուցեալ՝ վկայեմք ուղղափառական գոլց սմա։

1865 Նոյեմբերի 6.

Նուանս
ԱՐԻՑՏԱԿԻԾ ԵՊԻՍԿՈՊՈՅ
Ատենապետ Կրօնական ժադովոյ



վաւերացումը, և կամ սոյն Քրիստոնէական Ուսման դէմ՝ Երեւակ անուն Հանդիսի մէջ հրատարակուած՝ անգութ և քրիստոնէական Վարդապետութիւնները ժողովրեանառջ իբր անհիմն, սին ու պատիր և ջինծու բաներ ներկայացնող քննադատութիւնները (1)։

Ասոնց նման օրինակներ շատ կան, որ էջմիածնայ հեռաւո-

(1) Ասոնք մեր հասկնալիք բաները չեն, բայց երբոր մէկ կողմանէ Կրօնական ժողովին վաւերացումն ու միւս կողմանէ ծաղրածական բննադատութիւն կը տեսնեմք անոր դէմ՝ գայթակղելու իրաւունք ունիմք։

րութեանը համար՝ կրօնական խնդրոց ամենէն փափուկները վարանեալ եւ անլուծանելի վիճակներու մէջ մնալով՝ տեղական կառավարութեանն ալ ձանձրութիւն և հետևաբար տժզոհութիւն պատճառաւած են:

Էջմիածնայ Գերագոյն Իշխանութիւնն ունի հնուց ի վեր իր բարոյական ազդեցութիւնն Հայոց վրայ, և որ պիտի ունենայ մինչ ի յաւիտեան : Այս հին Իշխանութեան արտօնութիւնն՝ աւելի զօրութիւն ստացած է՝ Թուրքիոյ Վեհափառ Սուլթաններուն և Պարսկաստանի Շահերուն շնորհած մասնաւոր գերմաններով, որ այժմ էջմիածնայ մէջ կը գտնուին. որոց շնորհքը չը վայելելն ուրիշ բան չը կրնար նշանակել՝ բայց եթէ երկդիմի ապերախտութիւն, մին իր պաշտօնի և շնորհներուն դէմ մեղանչելով, և երկրորդն Ռուսաստան գտնուելուն համար խթանքն այն Վեհապետներուն շնորհացը անկարօտ ցոյց տալով : Ինչպէս կը տեսնուի, ասոնց երկուքն ալ ապերախտական մեղանչանք կը համարուին մյն Վեհապետաց, որոց Տէրութեան տակ բազմաթիւ հպատակող ժողովուրդներ ունի այս Իշխանութիւնը :

Աւելնո, խնջակէն Պատրիարքատանի, Հնդկաստանի և այլ Երկիրներու, նոյնպէս և Թուրքիոյ Հայոց վրայ ունեցած հոգեոր Իշխանութեան պարտաւորութիւնը լիովին կատարելու համար՝ հեռաւորութեան արգելքները կարելի եղածին չափ բառնալու է այդ Իշխանութիւնն՝ արժանաւոր Նուիրակի մը միջոցաւ. Նուիրակ մը, որ իր կրօնականէն և բուն Հայրապետական հին սկզբունքին ծառայելէն ուրիշ պաշտօն մը չըկրնար ունենալ, հետևաբար տեղական գործերու չըկրնար խառնուիլ երբէք . և այսպէս, թէ տեղական կառավարութեան, թէ Պատրիարքի և Պատրիարքարանի աշխարհական կամ ազգային Իշխանութեան և թէ Ժողովրդեան հետ, Էջմիածնայ Ս. Մինօ-

՚ղին և անոր բարոյական Իշխանութեան վայելուց յարաբերութիւններ ունենալով, խաղաղութեան պաշտօնեայ մը կրնայ համարուիլ ի մէջ Հայատէր Տէրութեանց :

Այս խնդրոյն մէջ ներքին խորհուրդ (arrièrée-reposée) մը, Թշնամի մարդը միայն կրնայ ուզել նշմարել. իսկ մեք բաւական կը համարինք ըսել՝ թէ մեր նպատակն ուրիշ բան չէ՝ բայց միայն կրօնքի անիշխանական վիճակն իրօք դատապարտել, որու մէջ կը գտնուին այսօր գրեթէ ընդհանուր Լուսաւորչական Հայք : Այս ձայնն ու փափաքը միայն Թրքաստանու համար չէ. այս Պարսկաստանի, Հնդկաստանի, Աւրստրիոյ, Եգիպտոսի, Մոլովալաքիոյ և այլ հայաբնակ երկիրներու համար ևս . քանզի մյս համարուած է Հայոց բարոյական կապը, և այս կապով միայն կրնայ Լուսաւորչականը միութիւն պահել, և ամէն մէկ մաս ժողովուրդ ասկվ իրեն տեղական կառավարութեան սիրելի լինել :

Իսկ թէ այս յուսահատ սթափման ձայները լսելի կամ ընդունելի պիտի լինին թէ չէ . Զեմք գիտեր . Կամ թէ Եզմիածնայ Գերագոյն Իշխանութիւնն ունի այնպիսի անձինք, որք այս փափուկ պաշտօնին պահանջած յատկութիւններն ունենան . Այդ մասին ալ տեղեկութիւն չունիմք, և մեր գիտցածը միայն ամ է, որ,

Հայաստանի պատմագրական, կրօնագրական և աշխարհագրական գիծերը չը ճանաչող կամ չգիտցող Վարդապետը՝ չը կրնար զԼուսաւորչականն արքայութիւն տանելու առաջնորդել :

Կ. Պօլիս 14 Յունվ. 1867 .

Տ. ԱՐԱՄԵԱՆ

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04146 7096

